

ԵԱՀԿ/ԺՏՄԻԳ

Ընտրությունների դիտորդական առաքելություն Հայաստանի Հանրապետություն Խորհրդարանական ընտրություններ 2007

ՀՀ, Երևան, փ. Երվանդ Քոչարի 17/2
Հեռ. : +374 (0)10 552399/552499/554399
Ֆաքս: +374 (0)10 554299
Էլ-փոստ: office@odhr.am



Միջանկյալ հաշվետվություն 1 21 – 28 մարտի, 2007թ.

I. ԱՄՓՈՓՈՒՄ

- Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունները տեղի կունենան 2007 թվականի մայիսի 12-ին: Իննսույն տեղ է հատկացված ազգային համամասնական ընտրակարգով և 41՝ մեծամասնականով:
- Իշխանությունները հաստատակամություն են հայտնել առանց խախտումների և ԵԱՀԿ-ի պարտավարություններին համապատասխան ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու ուղղությամբ: Նախորդ խորհրդարանական ընտրություններից հետո ընտրական օրենսգիրքը զգալի փոփոխվել է ու բարելավվել և ամուր հիմք է ապահովում ժողովրդավարական ընտրությունների անցկացման համար:
- Մարտի 25-ին վարչապետ Անդրանիկ Մարգարյանի՝ Հանրապետական կուսակցության (կառավարության գլխավոր գործընկեր) առաջնորդի անժամանակ մահն անհրաժեշտություն ստեղծեց ընտրությունների նախաշեմին փոփոխություններ կատարել կառավարությունում և կուսակցության ղեկավարության մեջ:
- Համամասնական և մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածույան և գրանցման դիմումները ներկայացվել են համապատասխան ընտրական մարմիններին: Համամասնական ընտրակարգով մրցակցելու համար դիմում է ներկայացրել 24 կուսակցություն և մեկ դաշինք, իսկ մեծամասնական ընտրակարգով մրցակցելու համար 141 քաղաքացի դիմել է որպես թեկնածու գրանցվելու համար: Երկու ընտրակարգերի համար թեկնածուների գրանցումը տեղի կունենա ապրիլի 2-ից մինչև 7-ն ընկած ժամանակահատվածում: Պաշտոնական քարոզարշավը կմեկնարկի ապրիլի 8-ին:
- Խորհրդարանական ընտրությունների ԵԱՀԿ/ԺՏՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելությունը (ԸԴԱ) պաշտոնապես մեկնարկել է մարտի 21-ին: Մարտի 25-ին հանրապետության տարածքով մեկ տեղաբաշխվել են 29 երկարաժամկետ դիտորդներ:

II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (խորհրդարանի) 131 տեղի համար ընտրությունները տեղի կունենան 2007 թվականի մայիսի 12-ին: Հիմնվելով կարիքների գնահատման առաքելության (ԿԳԱ) վրա¹ և ընդունելով Արտաքին գործերի նախարարության

¹ Տե՛ս ԵԱՀԿ/ԺՏՄԻԳ կարիքների գնահատման առաքելության հաշվետվությունը՝ http://www.osce.org/documents/odhr/2007/02/23307_en.pdf

(ԱԳՆ) հրավերը՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը մարտի 21–ին մեկնարկեց Ընտրությունների դիտորդական առաքելությունը (ԸԴԱ): Առաքելությունը, որի ղեկավարն է դեսպան Բորիս Ֆոլեցը, կազմված է մայրաքաղաք Երևանում տեղակայված 13 անդամից բաղկացած հիմնական թիմից, ինչպես նաև 29 նրկարաժամկետ դիտորդներից, որոնք մարտի 25–ին տեղաբաշխվեցին հանրապետության տարածքով մեկ՝ 11 տեղանքներով: Թիմում ներկայացված են ԵԱՀԿ 24 անդամ-պետությունների քաղաքացիներ:

Հիմնվելով ՀՀ ընտրական օրենսգրքում տեղ գտած փոփոխությունների վրա՝ Ազգային ժողովի անդամները ընտրվում են հնգամյա ժամկետով (ի համեմատ նախկինում չորս տարվա): Ի նկատի առնելով տեղ տրվում է համամասնական ընտրակարգով մասնակցելու կուսակցությունների/դաշինքների ներկայացրած ցուցակների հիման վրա, և 41-ը՝ մեծամասնական ընտրակարգով: Թեկնածության առաջադրման և գրանցման համար հավակնող անձինք պետք է ունենան Հայաստանի քաղաքացիություն և առնվազն վերջին հինգ տարվա ընթացքում բնակվեն Հայաստանում և լինեն առնվազն 25 տարեկան:

Համամասնական ընտրակարգով հաղթելու համար կուսակցության ցուցակը պետք է անցնի վավեր քվեների 5 տոկոսի ցենզը, իսկ դաշինքը՝ 7 տոկոսի ցենզը: Մեծամասնական ընտրակարգում հաղթում է ամենաշատ ձայներ ստացած թեկնածուն (պարզ մեծամասնական կարգով)²:

ԿԳԱ-ն իր եզրակացության մեջ նշել է, որ թեպետ ընտրական օրենսգրքն ամուր հիմք է ապահովում ժողովրդավարական ընտրությունների անցկացման համար, գալիք ընտրությունները հիմնականում կպահանջեն ավելի մեծ քաղաքական կամք և օրենսդրության բարեխիղճ իրագործում, որպեսզի ընտրություններն անցկացվեն ԵԱՀԿ-ի պարտավորություններին համապատասխան:

III. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

Քաղաքական կուսակցությունները որոշում են իրենց դիրքերը մայիսի 12–ի խորհրդարանական ընտրությունների համար՝ հեռանկարում ունենալով 2008 թվականի տարեսկզբին կայանալիք նախագահական ընտրությունները: Երկու հաջորդական ժամկետի վերաբերյալ սահմանադրական սահմանափակումը ենթադրում է, որ գործող նախագահը՝ Ռոբերտ Քոչարյանը, չի կարող մասնակցել 2008 թվականի ընտրություններին:

2003 թվականին Ազգային ժողով ընտրված քաղաքական կուսակցությունների և դաշինքի կազմը որոշակի փոփոխություններ է կրել վերջին տարվա ընթացքում, և այս փոփոխություններն իրենց ազդեցությունը ունեն գալիք ընտրապայքարի վրա: Հանրապետական կուսակցությունը և Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը (ՀՅԴ) շարունակում են կառավարությունում գործընկերներ մնալ: Այնուամենայնիվ, 2006 թվականի մայիսին Օրինաց Երկիր կուսակցությունը հեռացավ կառավարական կոալիցիայից, որում մասնակցում էր 2003 թվականին կոալիցիայի ձևավորումից ի վեր, և անցավ ընդդիմություն. միաժամանակ Օրինաց Երկրի առաջնորդ Արթուր Բաղդասարյանը պաշտոնաթող եղավ Ազգային ժողովի նախագահի (խոսնակի) պաշտոնից: Արդարություն դաշինքը՝ 2003 թվականին խորհրդարանական ներկայացչության հավակնող ամենամեծ ընդդիմադիր ուժը, չի շարունակվի ներկայիս խորհրդարանի շրջանակներից դուրս. դաշինքի բաղկացուցիչ կուսակցությունները մտադրված են կամ առանձին մրցել, կամ ընդհանրապես չմասնակցել ընտրություններին:

² Այն դեպքերում, երբ ներկայացված է միայն մեկ թեկնածու, վերջինս պետք է ստանա վավեր քվեների ավելի քան 50 տոկոսը:

Ընդհանուր առմամբ, քաղաքական կուսակցությունների հորիզոնում շարունակվում է նկատվել որոշակի անկայունություն, որը պայմանավորված է նոր քաղաքական ուժերի առաջացմամբ և այն հանգամանքով, որ 2003 թվականից ի վեր որոշ կուսակցություններ ըստ էության ցրվել են կամ անորոշության մեջ գտնվում: Այս առումով նկատելի է վերջին ժամանակներում Բարգավաճ Հայաստան կուսակցության արագ վերելքը, որը գործում է սկսած 2006 թվականի մարտից:

Մարտի 25-ին սրտի կաթվածից հանկարծամահ եղավ Հանրապետական կուսակցության ղեկավար վարչապետ Անդրանիկ Մարգարյանը: Հաջորդող իրադարձությունները, ներառյալ մարտի 28-ի հուղարկավորությունը, լայնորեն լուսաբանվել են բոլոր լրատվամիջոցների կողմից: Ըստ սահմանադրության պահանջի՝ նախորդ կառավարությունը ցրվեց, և 10 օրվա ընթացքում պետք է նշանակվի նոր վարչապետ. ներկայիս կառավարության կազմը պահպանվել է կայունություն ապահովելու նպատակով: Պարոն Մարգարյանի անժամանակ մահը ընտրական քարոզչության նախաշեմին փոփոխությունների անհրաժեշտություն ստեղծեց Հանրապետական կուսակցության ղեկավարության մեջ. մարտի 26-ին Սերժ Սարգսյանը ստանձնեց կուսակցության ղեկավարության գործառույթները:

IV. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ

Հայաստանի Հանրապետության ընտրական իրավական դաշտը հիմնականում ներառում է Սահմանադրությունը և ընտրական օրենսգիրքը: Սահմանադրությունը փոփոխվել է 2005 թվականին, իսկ ընտրական օրենսգիրքը վերջին տարիներին փոփոխվել է մի քանի անգամ, հիմնականում 2005 և 2006 թվականներին, ինչպես նաև վերջերս՝ 2007 թվականի փետրվարին:

Նախորդ խորհրդարանական ընտրություններից հետո ԵԱՀԿ/ԺՆՄԻԳ-ը իր եզրակացության մեջ նշեց, որ ընտրական օրենսգիրքը էական օրենք է, որը կարող է ամուր հիմք ապահովել հաջող ընտրական գործընթացի համար, որը, սակայն, ունի որոշակի նրկակի դրույթներ և իրագործման մեջ ենթակա է բացթողումների: ԵԱՀԿ/ԺՆՄԻԳ-ը և Եվրախորհրդի վենետիկյան հանձնաժողովը մեկնաբանություններ են արել ընտրական օրենսգրքում տեղ գտած փոփոխությունների վերաբերյալ և ընդհանուր առմամբ եզրակացրել, որ փոփոխությունների արդյունքում կատարվել են մի շարք բարեփոխումներ³: Այդ ժամանակից ի վեր՝ Ազգային ժողովը ձեռնարկել է հետագա փոփոխություններ, որոնցից շատերը արձագանքել են այս կազմակերպությունների կողմից բարձրացված հարցերին: Ընտրական օրենսգրքի ներկա տարբերակը էական և բարեփոխված իրավական հիմք է գալիք խորհրդարանական ընտրությունների համար:

Սահմանադրության ընտրական դրույթները և ընտրական օրենսգիրքը լրացվում են այլ իրավական գործիքների կողմից, ինչպիսիք են Քաղաքական կուսակցությունների մասին օրենքը, Քաղաքացիական օրենսգիրքը, Քրեական օրենսգիրքը և այլ օրենսդրական ակտեր, ինչպես նաև դատական որոշումներ: Ավելին՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) հրահանգները պարտադիր են ընտրական հանձնաժողովների և ընտրությունների մասնակիցների համար⁴:

Բ. ԸՆՏՐԱԸՆԱՎ ԵՎ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼ

³ ԵԱՀԿ/ԺՆՄԻԳ-ը և ԵՍ/ՎՀ, Միացյալ կարծիք ՀՀ Ընտրական օրենսգրքի փոփոխությունների վերաբերյալ (Մտրաաբուրգ, 15 հունիսի, 2006թ.), կարծիք No. 378/2006

⁴ Ընտրական օրենսգիրք, հոդված. 41

Պաշտոնական ընտրարշավը կմեկնարկի ապրիլի 8-ին՝ թեկնածուների գրանցումից անմիջապես հետո (տե՛ս ներքևում):

Զարգացում է արձանագրվել նախընտրական փուլում խոսքի և հավաքման ազատության վերաբերյալ, ըստ որի Երևանի քաղաքային իշխանությունների կողմից արգելվել է Ազատության հրապարակում հանրահավաքների անցկացումը: Այս արգելման առնչությամբ մարտի 22-ին «Այլընտրանք» քաղաքացիական կազմակերպության կողմից հարուցված գործը դատարանում պարտություն կրեց: ԸԴԱ-ը գտնվում է այս գործի առնչությամբ պաշտոնական փաստաթղթերի ձեռքբերման և ուսումնասիրման գործընթացում, որոնք տրամադրվել էին միայն դատական գործում ներգրավված կողմերին:

Սահմանադրությունը պաշտպանում է կարծիք արտահայտելու, միավորումներ կազմելու և հավաքվելու ազատությունը⁵, սակայն նախընտրական քաղաքական գործողությունների վերաբերյալ ողջամիտ սահմանափակումները կարելի է արդարացնել որոշակի հիմքերի վրա, ներառյալ ընտրությունների արդարությունը ապահովելու, հանրային կարգուկանոնը պահպանելու կամ քարոզչական կարգի արդյունավետությունը երաշխավորելու (օրինակ ընտրարշավի ֆինանսավորման վերաբերյալ կարգի) անհրաժեշտությունը: Օրենքը չի սահմանում, թե՛ ինչն է կազմում «քարոզարշավը»: Հանրային գործողությունը կամ հաղորդակցությունը, որը կոչ է անում որոշակի թեկնածուի կամ թեկնածուների օգտին կամ դեմ կատարել ընտրությունը, սովորաբար կարող է դիտվել որպես քարոզչություն: Այլ միջոցառումները, ինչպիսիք են որոշակի քաղաքական խմբերի կամ գործիչների հետ կապված քաղաքականությունների շուրջ հանրային աջակցության փնտրումը, անպայման չէ, որ քարոզչություն լինեն:⁶

Գ. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՐ ՔՍՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԲՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

2007 թվականի փետրվարին ընտրական օրենսգրքում տեղ գտած փոփոխությունները հիմնականում հասցեագրում էին երկրից դուրս քվեարկության (ԵԴՔ) և երկքաղաքացիություն ունեցող անձանց քվեարկության հարցերը: Թե՛ն նախկինում ԵԴՔ-ն անց էր կացվում հայկական դեսպանատներում և հյուպատոսարաններում արտասահմանում բնակվող կամ գտնվող քաղաքացիների համար, նման գործողություններին (մեկ բացառությամբ⁷) բոլոր հղումները դուրս են հանվել ընտրական օրենսգրքից: Ըստ փոփոխությունների՝ երկքաղաքացիության իրավունք ունեցող անձինք ի վիճակի չեն լինի մասնակցելու ազգային ընտրություններին և կկարողանան քվեարկել միայն այն պարագայում, եթե «գրանցված» լինեն Հայաստանում: Ներկայումս ԸԴԱ-ին պարզ չէ, թե՛ ինչպես կարելի է որոշել, արդյոք անձն ունի երկքաղաքացիություն, թե՛ ոչ:

Որոշակի շփոթություն է առկա կապված այս փոփոխությունների իրագործման հետ: ԸԴԱ-ին տեղեկացվել է խորհրդարանական բարձրաստիճան պաշտոնյայի կողմից, որ Ազգային ժողովի մտադրությունն էր, որ Հայաստանից դուրս քվեարկություն չանցկացվի: Արտասահմանում բնակվող երկքաղաքացիները ի վիճակի կլինեն քվեարկելու՝ ցույց տալով, որ Հայաստանում ունեն գույք կամ այլ ակտիվներ: Ըստ ԸԴԱ-ի գրանցման՝ Ընտրական օրենսգրքով սահմանված ընտրացուցակում ընդգրկվելու հիմքը հաշվառման վայրի հասցեն է:⁸

⁵ Սահմանադրություն, փոփոխված 19 մայիսի, 2005թ., հոդվածներ. 27-29

⁶ Կարող է բացառություն արվել, երբ նման քայլերը ձեռնարկվում են լեգիտիմ ֆինանսական կամ այլ քարոզչական կարգերից խուսափելու նպատակով, ներառյալ երրորդ կողմի կողմից տրվող աջակցությունը:

⁷ Ընտրական օրենսգրքի, հոդված 33.9 (դեսպանատներում և հյուպատոսարաններում ընտրատեղամասային պաշտոնյաների աշխատավարձերի վերաբերյալ, որոնք հնարավոր է ոչ միտումնավոր պահպանվել են):

⁸ Ընտրական օրենսգրքի, հոդված 11.1

ԵԴԲ-ի և նրկադաքացիների քվեարկության վերաբերյալ փոփոխությունների համեմատաբար ուշ իրագործումը կարող է խնդիրներ առաջացնել ընտրողներին տեղեկացնելու, ինչպես նաև հետևողական իրագործման առնչությամբ: ԸԴԱ-ն համապատասխան կառույցների հետ կրճնարկի դիվանագիտական և հյուպատոսական ծառայողների և նրկադաքացիների կողմից քվեարկությունը, ինչպես նաև այս հարցի այլ կողմերը:

V. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Խորհրդարանական ընտրությունների կազմակերպման և անցկացման ընտրական մարմինը կազմված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովից (ԿԸՀ), 41 Ընտրատարածքային հանձնաժողովներից (ԸԸՀ), որոնք համապատասխանում են 41 մեծամասնական ընտրատեղամասերին և մոտավորապես 2000 Տեղամասային ընտրական հանձնաժողովից (ՏԸՀ)⁹: ԿԸՀ-ն և ԸԸՀ-ները հիմնական մարմիններ են, մինչդեռ այս ընտրությունների ՏԸՀ-ները ըստ ծրագրի պետք է կազմավորվեն ապիլի 23-ից մինչև 26-ն ընկած ժամանակահատվածում: Փոփոխված ընտրական օրենսգիրքը բոլոր մակարդակներում ապահովում է ընտրական հանձնաժողովների առավել հավասարակշիռ կազմ: մեկ անդամ առաջադրվում է նախագահի կողմից, մեկական՝ խորհրդարանում վեց խորհրդակցություններից յուրաքանչյուրի կողմից, մեկը՝ «ժողովրդական պատգամավոր» խորհրդարանական խմբի կողմից (անկուսակցական պատգամավորները) և մեկ «դատական ծառայող»: Գոյություն ունի նշանակման աստիճանակարգ, ըստ որի ԿԸՀ-ի յուրաքանչյուր ներկայացուցիչ մեկական անդամ է առաջադրում 41 ԸԸՀ-ներից յուրաքանչյուրի համար, ով իր հերթին անդամ է առաջադրում տվյալ ԸԸՀ-ի ներքո գործող ՏԸՀ-ից յուրաքանչյուրի համար:

Ընտրական օրենսգրքի վերջին փոփոխություններից մեկը ընտրական ժամանաշրջանի ընթացքում (սկսած ընտրությունների հայտարարումից մինչև արդյունքների վերջնական որոշումը) հանել է հանձնաժողովների կողմից գործողությունների ձեռնարկման քվորումի պահանջը¹⁰: Թեև այն կարող է անհրաժեշտ հակաբոլոկոսային միջոց լինել, քվորումի պահանջի բացակայությունը պայմաններ է ստեղծում, որտեղ գործողությունները և որոշումները կարող են ընդունվել ընտրական հանձնաժողովի նախագահի կամ հանձնաժողովի անդամների փոքր թվի կողմից: Հատկապես մտահոգիչ է այն դրույթը, որը վերապահում է հանձնաժողովի նախագահին դիտարկել բողոքը կամ հանձնել այն մեկ այլ անդամի դիտարկմանը կամ առաջարկություններին¹¹: Այս առումով կարևոր է, որպեսզի հանձնաժողովները գործեն «օրինականության, կոլեգիալության և հրապարակայնության» սկզբունքների հիման վրա¹²:

Մարտի 28-ին Օրինաց Երկիր խորհրդարանական խմբակցությունը փոխարինեց իր ԿԸՀ անդամին: Վերջինս Օրինաց Երկրի ցուցակում պոտենցիալ թեկնածու է, և այդ իսկ պատճառով նա էր կանչվել ԿԸՀ-ից: Նրան փոխարինել է մի կին՝ մեկ ներքոդով բարձրացնելով ԿԸՀ-ում կանանց հարաբերությունը:

Այս զեկույցում նշված ժամանակահատվածում ԿԸՀ-ն մարտի 27-ին անց է կացրել մեկ հերթական նիստ: Հավատարմագրման բացակայության պատճառով ԸԴԱ-ը ի վիճակի չէր այն դիտարկելու: Նույն օրն ավելի ուշ ԸԴԱ-ն հավատարմագրվեց, որի համար դիմել էր մարտի 20-ին, որից հետո ԿԸՀ-ն ուներ օրենքով սահմանված յոթօրյա ժամկետ հավատարմագրելու համար:

⁹ Յուրաքանչյուր ԸԸՀ-ի ներքո գործող ՏԸՀ-ների հստակ քանակը պետք է մարտի 28-ին որոշվեր ԸԸՀ-ների կողմից, և սույն գրվածքի պահի դրությամբ հայտարարություն է սպասվում ԿԸՀ-ից:

¹⁰ Ընտրական օրենսգիրք, հոդված 39.7

¹¹ Ընտրական օրենսգիրք, հոդված 40.3

¹² Ընտրական օրենսգիրք, հոդված 32.2

ԿԸՏ-ը ունի կայք, որը նախատեսված է, որ պետք է ծառայի որպես հիմնական տեղեկատվական միջոց: Այն նաև ինտերնետում տեղակայված ազգային ընտրացուցակի պորտալ է, որտեղ ընտրողներին խրախուսվում է ստուգել իրենց տվյալները: ԸԴԱ-ը տեղեկացել է ԿԸՏ-ի մի պաշտոնյայից, որ ընտրացուցակը տեղակայված է նույն սերվերի վրա, ինչպես և ԿԸՏ-ի կայքի նյութերը: Պարզ չէ, թե արդյոք սերվերը կարող է համապատասխան կերպով դիմադրել ընտրացուցակի ստուգման նպատակով կայքի մեծաքանակ այցելուներին. ԸԴԱ-ն գտել է, որ ԿԸՏ-ի կայքը երկար ժամանակ ամբողջությամբ հասանելի չէր:

Չնայած մարտի 28-ի Վարչապետ Մարգարյանի համար հայտարարված պաշտոնական սզո օրվան, այդ օրվա կարևոր վերջնաժամկետները անհրաժեշտություն ստեղծեցին, որպեսզի ընտրական մարմինները աշխատեն լրիվ ռեժիմով, ներառյալ թեկնածուների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի հանձնումը (տե՛ս ներքևում) և ընտրատեղամասերի կազմակերպումը ԸԸՏ-ների պարագայում: ԿԸՏ-ն և համարյա բոլոր ԸԸՏ-ները բաց էին, այնուամենայնիվ, 19 ԸԸՏ-ն (Վաղարշապատ), ըստ ԸԴԱ-ի դիտարկման, աշխատանքային ժամերին փակ է եղել այդ օրը: ԸԴԱ-ն հետևում է, թե արդյոք այդ ԸԸՏ-ում որևէ ընտրական գործընթաց տուժել է այդ պատճառով:

VI. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Ընտրական գործընթացի առաջին փուլը՝ համամասնական ընտրակարգով մասնակցելու առաջադրման փաստաթղթերը կուսակցությունների ու դաշինքների և մեծամասնական ընտրակարգով անհատ թեկնածուների կողմից ներկայացումը, ավարտվել է մարտի 3-ին: Միայն փաստաթղթերը ներկայացրած կուսակցությունները/դաշինքները կարող էին այնուհետև շարունակել հաջորդ փուլ՝ մինչև մարտի 28-ը ներկայացնելով գրանցման փաստաթղթերը:

Համամասնական ընտրակարգով առաջադրման փաստաթղթեր ԿԸՏ են ներկայացրել 27 կուսակցություն և մեկ ընտրական դաշինք: Գրանցման համար ներկայացրած ամենամեծ ցուցակներն էին Օրինաց Երկրինը (131 անուն), ՀՅԴ-ինը (117), Հանրապետական կուսակցությանը (112) և Բարգավաճ Հայաստանինը (112):

Համաձայն ԿԸՏ-ի՝ ընդհանուր առմամբ 173 հոգի է առաջադրվել մեծամասնական ընտրակարգի համար¹³: Նրանցից 141-ը մինչև մարտի 28-ը ներկայացրել են գրանցման փաստաթղթերը, միջինը չորսից քիչ թեկնածու մեկ ընտրատեղամասի համար: Մեկ ընտրատեղամասում գրանցվելու համար դիմորդների ամենամեծ թիվը կազմում է յոթ¹⁴, այնուամենայնիվ հինգ ընտրատեղամասերում արձանագրվել է միայն մեկ դիմորդ¹⁵: Հիսունմեկ դիմում է արձանագրվել «քաղաքացիական նախաձեռնությամբ» առաջադրմամբ՝ պաշտոնապես անկուսակցական. մնացածը կուսակցությունների կողմից առաջադրված թեկնածուներ են: Միայն Հանրապետական կուսակցությունն է փորձում լայնածավալ, երկրով մեկ ներկայության ապահովել՝ հանձնելով 26 դիմում, որին հաջորդում են Բարգավաճ Հայաստանը և Օրինաց Երկիրը՝ յուրաքանչյուրը ներկայացնելով 13-ական դիմում, և Դաշինք կուսակցությունը՝ ութ դիմում. մնացած բոլորն ունեն հինգ կամ ավելի քիչ դիմորդներ: Ընդհանուր առմամբ համամասնական ընտրակարգով գրանցման դիմում ներկայացրած 14 և չներկայացրած վեց կուսակցություն փորձել է մեծամասնական ընտրակարգով առնվազն մեկ թեկնածու գրանցել:

Այն պարագայում, եթե միայն մեկ թեկնածու է գրանցված մեծամասնական ընտրակարգով, ապա ընտրողներին տրվում է «դեմ քվեարկելու» հնարավորություն: Ելնելով միջազգային

¹³ ԿԸՏ Նախագահի հայտարարություն ԿԸՏ հերթական նիստի ժամանակ, 28 մարտի, 2007թ., ժամը 19:00:

¹⁴ ԸԸՏ-ներ 4 և 14

¹⁵ ԸԸՏ-ներ 7, 20, 27, 28 և 32

փորձագետների առաջարկություններից՝ նախկին «բոլորին դեմ» տարբերակը հանվել է երկու և ավելի թեկնածու ունեցող մեծամասնական ընտրակարգի և համամասնական ընտրակարգի համար:

Թեկնածուների գրանցումը տեղի կունենա ապրիլի 2-ից մինչև 7-ն ընկած ժամանակահատվածում: Համամասնական ընտրակարգի կուսակցության և դաշինքի ցուցակների գրանցումը կկատարվի ԿԸՀ-ի կողմից, իսկ մեծամասնական ընտրակարգով գրանցումը՝ 41 ԸԸՀ-ների կողմից:

Ընտրական օրենսգրքի համաձայն՝ այժմ կանայք պետք է կազմեն կուսակցության կամ դաշինքի համամասնական ցուցակի առնվազն 15 տոկոսը և ցուցակում գրավեն առնվազն յուրաքանչյուր տասներորդ տեղը: Սա բարելավում է համեմատած 2003 թվականի խորհրդարանական ընտրությունների հետ: Ներկայիս Ազգային ժողովում կանանց ներկայացչությունը ցածր է. 131 տեղից միայն յոթը:

VII. ԼՐԱՏՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Հայաստանում գործում են համեմատաբար մեծ թվով լրատվամիջոցներ: Հեռուստատեսությունը տեղեկատվության, ներառյալ ընտրական գործընթացի մասին հիմնական աղբյուրն է: Հեռուստատեսության կողմից ներկայացված կարծիքների բազմազանության պակասը քննադատվել է խոսքի ազատության հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների, ներառյալ անցյալ տարի Լրատվամիջոցների ազատության գծով ԵԱՀԿ-ի ներկայացուցչի կողմից¹⁶:

Սահմանադրությունը ապահովում է թե՛ խոսքի ազատություն և թե՛ տեղեկատվության ազատություն: Հեռուստատեսության և ռադիոհեռարձակման մասին օրենքը արգելում է գրաքննությունը և որոշակի կանոններ սահմանում ընտրական քարոզչության համար: Ընտրական օրենսգրքը, այնուամենայնիվ, մնում է լրատվամիջոցներով ընտրական քարոզչության անցկացման համար հիմնական իրավական հիմքը: Այն որոշակի մանրամասներով կառավարում է հեռուստատեսության աշխատանքը. թե՛ հանրային և թե՛ մասնավոր լրատվամիջոցներով հեռարձակվող լրատվական ծրագրերը պարտավոր են ընտրական քարոզարշավների մրցակիցների մասին ներկայացնել անկողմնակալ և չքննադատող տեղեկատվություն և ապահովել հավասար ու արդար պայմաններ: Հիմնվելով «հավասար պայմաններ» սկզբունքից՝ օրենսգրքը նաև բոլոր թեկնածուներին ապահովում է անվճար և վճարովի եթերաժամ: Յուրաքանչյուր կուսակցության/դաշինքի իրավունք է տրվում ստանալու հանրային հեռուստատեսության 60 և հանրային ռադիոյի առավելագույնը 120 րոպե եթերաժամ, և վճարովի եթերաժամի ոչ ավելի քան 120 և 180 րոպե համապատասխանաբար: Անվճար եթերաժամի ցուցակը կորոշվի ԿԸՀ-ի կողմից թեկնածուների գրանցման օրից մեկ օր հետո:

ԿԸՀ-ն վերահսկում է զանգվածային լրատվամիջոցներին՝ քարոզչության հավասար հնարավորություն ապահովելու նպատակով: Խախտումների դեպքում այն իրավունք ունի բողոք ներկայացնել դատարան¹⁷: Իրավական գործընթացների հետ հեռուստատեսության համապատասխանությունը նույնպես վերահսկվում է Ռադիոյի և հեռուստատեսության ազգային հանձնաժողովի կողմից, որը նույն ձևով խախտումների դեպքում կարող է դիմել դատարան,

¹⁶ Լրատվական դաշտի ազատության ԵԱՀԿ-ի ներկայացուցիչ, « Հայաստանում լրատվական դաշտի դրությունը», 26 հուլիսի, 2006թ., <http://www.osce.org/fom/documents.html?lsi=true&grp=297&limit=10&pos=10>.

¹⁷ Ընտրական օրենսգրք, հոդվածներ 41.1, 45

որտեղ ԿԸՀ-ն նույնպես իրավունք ունի դատարանին ներկայացնել նման խախտման վերաբերյալ իր կարծիքը¹⁸:

Երևանի Մամուլի ակումբի և Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտի կողմից կատարվում են լրատվամիջոցների աշխատանքի վերահսկման ընթացիկ աշխատանքներ: Երևանի Մամուլի ակումբը նաև մարտի 10-ին առնվազն 18 լրատվամիջոցների կողմից՝ թե՛ երկրի և թե՛ մարզային մակարդակով լուսաբանող, ընդունված վարվելակերպի կանոնների ձեռնարկողն էր: Վարվելակերպի կանոնների ստորագիրները նաև պարտավորվել են հետևելու Ընտրությունների լուսաբանման սկզբունքների մասին հռչակագրին և ընտրել են վերահսկիչ մարմին, որը ընդգրկում է լրատվամիջոցների տարբեր աշխատակիցներ:

VIII. ԸՂԻԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԸՂԻԱ-ն պաշտոնապես սկսել է իր աշխատանքը մարտի 21-ին: Այն մի շարք հանդիպումներ է սկսել խորհրդարանական և կառավարական պաշտոնյաների, լրատվամիջոցների և ռեզիդենտ միջազգային համայնքի ներկայացուցիչների հետ և ակնկալում օրերս կանոնավոր հանդիպել ԿԸՀ-ի հետ: ԸՂԻԱ-ի հիմնական թիմը կապ կհաստատի նաև քաղաքական կուսակցությունների, առաջադրված թեկնածուների և նրանց ներկայացուցիչների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության դերակատարների հետ: Լրատվամիջոցների աշխատանքի վերահսկումը՝ ԵԱՀԿ/ԺՎՄԻԳ-ի ընտրական առաքելության կարևոր բաղադրիչը, մեկնարկել է մարտի 22-ին՝ հիմնվելով յոթ հեռուստատալիքների, երկու ռադիոկայանների և չորս օրաթերթերի որակական և քանակական վերլուծության վրա¹⁹:

Տասնչորս երակարաժամկետ դիտորդ (թվով 29 հոգի), ներառյալ ԵԱՀԿ/ԺՎՄԻԳ-ի դիտորդական առաքելություններում ընտրական փորձագետների մասնակցության բազմազանության հիմնադրամի կողմից տրամադրված երկու երկարաժամկետ դիտորդ մարտի 25-ին տեղաբաշխվել է Հայաստանի 11 տեղանք՝ ընդգրկելով ամբողջ երկրի տարածքը: Նրանք կապ կհաստատեն ստորադաս ընտրական հանձնաժողովների և մարզերում ընտրական դերակատարների հետ:

Ընտրության օրվա դիտարկման համար ԵԱՀԿ/ԺՎՄԻԳ-ը խնդրանք է ներկայացրել ԵԱՀԿ-ի անդամ պետություններին 300 կարճաժամկետ դիտորդների տրամադրման համար:

¹⁸ Ընտրական օրենսգիրք, հոդված 20.9

¹⁹ Հեռուստատեսություն՝ Հ1 (հանրային հեռուստաընկերություն), ԱԼՄ Հեռուստաընկերություն, Արմենիա Հեռուստաընկերություն, Հ2, Կենտրոն Հեռուստաընկերություն, Շանթ Հեռուստաընկերություն, Երկիր Մեդիա, Ռադիո: Հանրային ռադիո, RFE/Ազատություն ռադիո, Թերթեր: Հայաստանի Հանրապետություն (ֆինանսավորվում է պետության կողմից), Առավոտ, Ազգ, Հայկական ժամանակ: